

կոպտը նոյն համարել ընդ Գաւթի Հոսով-  
մայեցոյ, որոյ պրուածքը կը յիշէ և խս-  
րենացի 'ի պատմութեան Հոբիփոմեանց, և-  
թէ ընդհակառակն Հայազգի ոմն էր. որոշ  
բան մը չեմ կարող ըսել:

Գ. յՈսկեփորիկն Ս. էջ 517 « Պատմու-  
թիւն սուրբ գեղարդին և այլ տնօրինա-  
կանացն Քրիստոսի կայ, որոյ հեղինակն  
կ'ըսէ. « Սյապէս գտաք 'ի գործոց ոսկեգրով  
'ի պատմագիր թագաւորութեան քաղաքիս  
կ. Պոլիս, և այսպէս պատմեցաւ յորժամ  
առին զթագաւորութեան քաղաքին՝ մեծ  
թագաւորն Փռանկաց, բացեալ զմեծ և-  
կեղեցին զսուրբն Սոփիա, կոչէր գամենայն  
քաղաքն և զպատրիարքն և զնախարարս  
սուրբ եկեղեցոյն և խնդրէր զիրկական  
տրբութիւնս, և նորա զոր սենէին ցուցին և

ապա բերին զմեծ զործոց 'ի պատմարան  
և էր գրեալ այսպէս » . . . . :

Ի միջի բազմաց՝ որք երևբ էջ գրուած  
են, կը յիշուի « և աստուածամօր պատկերն,  
սուրբ Առաքեալն թաղաւորութեանս 'ի Հայք...  
Տիրամօր պատկերն 'ի Հագեաց վանքն » : Իւ  
յիշատակարանն է. « Եւ այսպէս օրինակե-  
ցաւ տնօրինական սրբութիւնն 'ի հոռով  
(հոռով) գրէ 'ի Հայ թարգմանեցաւ ՃՀԶ.  
և Քրիստոսի վառք յաւիտեանս ամէն » :

Այլ ևս գեւ չկերամ իմ դրութիւնս,  
հրատարակաւ ևս կը յայտնեմ՝ անկեղծ  
չնորհակայութիւնս առ Գեր. Հ. Ղևոնդ  
Մ. Ստիչան, որ առ ինքն դիմած ժամանակս  
միշտ ամենայն ազնուութեամբ ջանաց զիւ-  
րացնել իմ դժուարութիւններս :

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՍ

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Թ Է Ո Դ Ո Ս Ի Ո Յ Դ Է Պ Ի Ն Ո Ր - Ն Ա Խ Ի Զ Ե Ի Ա Ն

(ՏԵՍ ԷՋ Ե)

Է

« Զի՛ գեղեցիկ իմ կորուսեալ հայրենիք,  
Ո՛վ յիշատակ ազնուաւոր եւ քաղցրիկ » :



տալացի բանաստեղծին այս  
երկու տողերը, զորս դրած է  
Բաբելացոց զետոյն եզերք տա-  
րագրեալ իսրայելացոց բերանը,  
յոյժ վայելչական էին մեր գաղթա-  
կան եղբարց ալ, երբ ընդ երկար ճա-  
նապարհորդելով՝ հասան իրենց խոս-  
տացեալ երկիրը, Դոն դետին հիւսի-  
սային ափանց վրայ: Աչք մի կու տան  
նորա այն վայրենի և անձառ անապա-  
տին, որոյ ծայրը հեռուն երկնից հետ  
կը միանայ, ուր չիք ոչ լեռ, ոչ բլուր և  
ոչ անտառ, անապատ ամայի. ուր

միայն տեղ տեղ շամբեր և եղէգնուտ-  
ներ կ'երևան ամառ ատեն, վասն զի Դոն  
դետն վեր բարձրանալով գարնան իւր  
թումբերէն՝ կ'ողողէ երկիրը ցմեծ աա-  
րածութիւն, և ապա տակաւ յետս քա-  
շուելով ճախճախուտներ կը թողու այս  
դին այն դին: Չայս ամենայն տեսնալով  
տարազիր հայկազուն Տուրքայիք, կը  
լքանին, կը կոտորի սրտերնին, աչքն-  
րուն առաջ կը բերեն իրենց կարողան  
հայրենիքը հեշտին եկեղնեղով, հայա-  
կապ մայրաքաղաքն Կաֆա՛ իւր 36 ծո-  
վահայեաց և ցմբէթազարգ եկեղե-

ցեօք, այդիններով և պարտէզներով, Սուրխաթ նսնամատուեր խիտաուխտ անտառներով, և անոնց մէջ վանքերով և արեղայից հողեմներով. կէօք-թէփէ՝ բարձրաբերձ ժայռերով, Սուլտան-Սալա, Թօփու, Օրդալան, Սօփուք-Սու, Սղըւայիա, իրենց կանաչագեղ բլուրներով, այդիններով, պողատու պարտէզներով, անտառներով. կը հառաչեն նոքա սրտերուն խորերէն. երթալով կը բազմապատկի նոցա գիմաց հեռուեր Տաւրիոյ զեղեցկութիւնը, կը հալի նոցա սիրար երբ կը յիշեն որ անգարձ պիտի լինի իրենց պանդխտութիւնն, « ո՛վ յիշատակ աղետաւոր և քաղցրիկ » : կը նշովեն այն ժամը՝ յորում թողին զՂրիմ, կ'երգնուն որ անպատճառ վերագառնան ու վայելեն իրենց պապենական այդիններն ու պարտէզները. կը բողբեն, կը պաղատին. այլ լսող չի լինիր: Քանի մի գերդաստանը ինչպէս Տէօլվէթեանը կ'անցնին յիկատերինեալաւ իրենց կաթսիի եղբարց մօտ, և ապա նոցա հետ 'ի միտսին կը վերագառնան 'ի Ղրիմ. այլք ու մանր գիշերախառն կ'ուզեն վերագտունալ փախչելով, այլ սոցա առաջ պատկենին խաղախաց սուրինք, կամայ և ակամայ կը խոնարհին առ ժամն ճակատագրին անողոր օրինաց: Թոյսէփ սրբազան՝ նոցա թեմակալ առաջնորդը շատ յորդոր և խրատներ կու տայ, որ Ողորմած կայսրուհւոյն կամացը հնազանդին. մեծահանդէս կ'օրհնէ ըստ գծագրեալ յատակաձևոյն նոր շինուելիք քաղաքին հիմունքը, և հին՝ միանգամայն ցանկալի անուամբ կը կնքէ քաղաքը Նախիչևան կոչելով: Այս կը լինի 1779ին, Ղրիմէ ելնելուն Երկրորդ տարին. կ'անցնին ամիսներ, կ'անցնին տարիներ, տապալէզ ամառանց՝ խստաշունչ ձմեռներ կը յաջորդեն, կու դայ գարուն. կը յիշեն զեղացիք իրենց Ղրիմեցի համանուն՝ գեղերն անտառազարդ բլուրներով, ուր

դոյնզգոյն ծաղկունք հաղարներով կը բացուին, ուր անտառք կը հնչեն սուխակին և սարեակին զեղեցկներով, դարձեալ կը բորբոքի նոցա մէջ Ղրիմ գառնալու փափաքը, փփերնուն մէջ կ'առնուն զառիկ կոյուած փոքր միջատը ու կը հարցնեն կողկողագին « Ղրիմին ճամբան որն է » . անբան միջատը շփոթած՝ մի այս և մի այն կողմը կ'երթայ:

Ղրիմեցի դաղթականաց մի մասն, կորուսեալ հայրենեաց ցաւով, միանգամայն չկարենալով գիմանալ օտոց խստութեան, այդ անսիրելի աշխարհքին մէջ կը փակեն աչքերը. մնացեալք տակաւ կը հասկնան որ իրենք շատ անգոր են մաքառելու հզօր խխանութեան գէմ. միւս կողմանէ հզօրագոյն ևս հարկ մի կը ստիպէ գնոսա 'ի Ղրիմ վերագարձի ցնորքն մէկ կողմ դնելով՝ աշխատութեան ձեռք զարնել. այդ հարկն էր կարևոր ապրուստի և աւտնին պիտոյիցը 'նեղը ինկած Նախիջևային, և ըստ վկայութեան նոցա, « տեղով հորեր փորելու ստիպուած », կը սրէ գեղացին իւր խօփը. և խաղախաց աշխարհին հողն տակն սւ վրայ կը բերէ. քաղաքացին, ըստ բնատուր հանճարոյ, վաճառականութեան ձեռք կը զարնէ, և շահաւոր կերպով իրեն կը ծառայեցընէ Գօնի ալիքը. Սիբերիայէ սկսեալ մինչև ցիսապիական ծով. քաղաքէ քաղաք, տօնավաճառէ տօնավաճառ կը յաճախէ, Նովկորոտ, Խարքով, Քիւիվ, Փոլթաւա, կաշի, մորթ, ճարպ, իւղ, բուրդ, երկաթ, ածուխ, ցորեան, ձուկն և այլ և այլ ձեռագործ ապրանքներ՝ կ'անուր կը ծախէ, և քիչ ժամանակի միջոց այնպիսի նոր վաճառաշահութեան դռներ կը բանայ այն վայրենի աշխարհին մէջ, որ օտարք կը նախանձին, կ'ուզեն Նախիջևանու քաղաքացի դարուի, այլ Նախիջևանցիք կայսրուհւոյն շնորհած պարգևագրին զօրութեամբ՝ կը մերժեն օտարաց մուտքը 'ի

1 Նախիջևանցի գեղացիք իրենց գեղերուն թաթաբանչիւն անուներ ասուած են 'ի յիշատակ իրենց Հին բնակութեան Զալճըր (Օրդալան), Մեծ Սալա, Սու-

տան - Սալա, Թօփուի և Նիսիվէթա. այս վերին թաթաբանչիւն չէ, և Ղրիմու մէջ չեմ լսած ես մինչև ցայսօր սոց արուսով գեղ:

Նախիջևան: Այս է ահա պատճառը, որ Նախիջևանու մեծ, Ռոստով կոչուած աննշան բերդը կամայ կամայ 100,000 բնակչով մի մեծ քաղաք կը դառնայ: Եւր բնական ճամբով կ'անցնի Նախիջևանու առետուրը: սակայն Ռոստով դիտեալով որ շնորհիւ Նախիջևանու է իւր գոյութիւնը, ասկաւ մտանալով քարեկամութեան ձեռք կը կտրկուէ: Նախիջևան իր առանձնաշնորհութիւնը քը և ամփոփութիւնը պահելու մտքով, հետու կը բռնէ զիջքը: այլ կու գայ ժամանակ եւ արդէն մաս է, որ այդ երկու քաղաքներ իրարու պէտքէ խառնուին: զգուշանալին այն է՝ որ մեծը զիջքը չկլանէ քարոյ պէս:

Ը

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՆԱՆ

Մայիսի 6ին, ժամը կէս օրէն վերջ հինգ և կէս հասայ Նախիջևանու գրկից Ռոստով մեծ քաղաքը: այլ զի վախճանս մեծ ամեծ քաղաքոց ժխարիւ զըւարճանող չէր, իսկոյն փոքրիկ կառք մի վարձեցի ՚ի Նախիջևան գեալու: Բոստովի ստալարատակ մեծ փողոցներէն անցնելու միջոցիս, երկու կողմը բարձրացած աղի սակերտ վայելչաձև տնրուն վրայ էր աչքս, մահաւանդ հարուստ խանութներուն վրայ, որոց ճակատը կը տեսնէի զարդարուած սկէտառ վերտառութիւններով: Արդէն դիտեք՝ որ Ռոստովի վաճառականութեան մի մասն Նախիջևանցի Հայոց ձեռքն է: սակայն և ոչ մի հայազիր վերտառութիւն չդարկաւ աչքիս: բաց յայս մանէ, հայերէն մականուանքն ևս այլոյցած գտայ, այլ և յախուան կերպով թարգմանած: Եղանակէ գեղեցիկ եւս վերջաւորութիւնը ով՛ փոխուած: Ետ կտրելի է որ Նախիջևանցիք, կամ Ռոստովցի հայազուրէք՝ այդ մտանկանց և փրջաւորութեանց խնդիրը բմախնը գրութիւն համարին: սակայն ազգային սղոյ նախանձախնդիր մարդը, փոքրէն մեծը զուշակելով սովորելի է որ

չվշտանայ: Ուրեն այժմ սակէ երկու հարիւր տարի առաջ մեծանուն և փարթամ Ենանովիչ, Վարդերեսիչ, Ալբրոսովիչ, և այլ Լեհաստանի հայկազուն վաճառականներն և աղիւականներն, չէ որ նոքա սակա հեռանալով յազգութեան՝ բարբոսին օտարացան լեհանալով:

Առաջ գնալով, քաղաքին արուարձաններուն կը մտնենայի, և ահա տափարակ դաշտին վրայ յերեան եկու հայտնակ Նախիջևան քաղաքն իւր կանոնաւորեալ փողոցներովն և գմբէթազարդ եկեղեցեք, բարձրարեք զանդակատամբ, որոց գագաթման սկէտգոծ խաչերը, դէպ ՚ի մասս խոնարհած արևուն ճառագայթներէն զեղեցիկ կը ցոլային:

Նոյն օրը թագաժառանգ պայտազատին Նիկողոյոս Ալեքսանդրովչի ծնընդեան օրը լինելով, բոլոր քաղաքը և սաղայն դրօշակներով զարդարուած էր: օրը հանդարտ և շերին, փոքոցաց մէջ բազմութիւն զբօսաւիրաց: այլ սր սխրային և քան զամենայն ինչ ինձ հաճոյական, ամէն կողմանէ Հայոց բարբառը կը լսէի, գրեթէ ամէն անասն հայկական ախարք էր: յոյժ ախորժելի և անմուսնայի զգացմամբ տրոփեց սիրտս, երբ Ս. Լուսաւորիչ փողոցէն առաջ գնալով՝ յանուն Սրբոյն կանգնած հոյակապ եկեղեցին դիմացս ելաւ, ՚ի ճակատուն կրելով սղգիս լուսատու ին՝ վայելչանկար պատկերը, անհրաժեշտ Տրդատ թագաւորն Հայոց՝ առաջի Սրբոյն ծնրադիր:

Անցեալ ասրի աշնան, օգոստոս 20, փաստկան գաւառին մէջ հայաչէն կամենից քաղաքը մոնկու միջոցիս, բարբոսին տարբեր զգացումն կրած էի, քան ինչ որ այժմ՝ զգացի: հոն քառակարկա երկյարկ բերդի զոնէ կ'անցնէի: Հայոց քաղաքը մոնկու համար, իսկ աստ անբերդ և անդուսն հայսութեամբ կենդանի քաղաքին մէջ ազատ կը շնչէի: հոն ինչպէս եղանակն աշնան, նոյն և ազգիս աշուրք կամ՝ ձմեռը պիտի տեսնէի, իսկ աստ՝ ազգս գարնան

վիճակի մէջ. ուր էր թէ երկուսն լինէր այդ գարունը, և երկարադայնի ևս ամառն յաջորդէր նմա: Երկու քաղաքներս ևս Անեցի հայկազանց չէիք, օտար աշխարհաց մէջ, մին ձի գարուն չէիք, քարաչէն պատեր չուրս կուրք, որոյ պտայար ջրալիւ խրամ, որպէս զի թըշնամին ազատ մուտք չդասէ, մինչ երկրորդս ազատ յահէ թշնամայն, անպարտապէս և անխրամ ձը գարուն վերջերը չինուած: Առաջնոյն մէջ Հայկազունք երկար տարիներ իրենց գերը փառաւոր կերպով խաղալէն վերջը՝ քաշուել են, խորայնի՛ որդւոց թողով թատարը, իսկ աստանօր նոր կը սկսին աղջայինք դպրութեամբ լուսաւորեալ, ազգիս անունը արդոյ ընծայելու օտարաց առջև:

Նախիջևան հայաբնակ քաղաք է 16,000 բնակչով, որոյ թէպէտ իբրև կէսն օտարազգի կը համարուին, այլ քաղաքին մէջ հայ տարրն է տիրողը, մնացեալք ծառայ մարդիկ են: Նախիջևանի հայ բնակչաց վրայ խօսեցով մեզ հարկ կը լինի սակաւ մի ուղիղ նպատակին խոտորելով, ընդհանուր դադարական Հայոց թիւերով գրաւել, որ կարծեմ հետաքրքրական լինի ընթերցողաց: Խառնասա՛ վաւերական աղբիւրներէ հաւաքելով, ընդհանուր դադարական քրիստոնէից թիւը որ ելած են 'ի Ղրիմէ 1778ին՝ 34,386 կը դնէ. այս ժողովրդոց կէսը (եթէ ոչ և աւելին) Հայք են, զի քիչ վերջ աղջային գրիչք 3000տուն Հայոց կը գրեն. եթէ տուն գլուխ հինգ հոգի հաշուելու լինիմք, Հայոց թիւը 15,000 կը լինի: Այժմ Նախիջևան 8,000 կը հաշուէ քաղաքին աղջայնոց թիւը, նոյնչափ կամ սակաւ մի պտկաս Նախիջևանու հինգ գեղերուն բնակիչքը, ընդ ամէնը բոլոր հայ շուով՝ Նախիջևանիւր գեղերով 16,000 հայ Անեցի գաղթականք: Եթէ սոցա վրայ աւելցընենք 5,000 զրիմեցի Հայք, որք դարձել են յեկատերինեսուէ, կը լինի 21,000, Ազովեան կամ Եկատերինեսուա գաւառի շատ քաղաքաց մէջ և

կուրան գետի վրայ ցրուած Հայերն, հաւանական է որ 9ը կամ 10ը հազարի հասնին. որով Ղրիմէ ենող հայ գաղթականաց թիւը, 'ի միասին հաշուելով վերագարձողները, կը լինի 30,000: Հարիւր տարուան միջոց կրկնապատիկեղած է Հայոց թիւը, որ թէպէտ օտար աղջաց աղքատ համարին նայելով չէ մխրթարական, այլ այս պէտք է 'ի նկատուեննաւ, որ բազմաթիւ եղած է՝ մինչև Եկատերինեսուաի կլիմային վարժելու հայ մեռելոց թիւը: — Այլ մեք դառնանք 'ի Նախիջևան:

Քաղաքը հետեւէն դիտելով չափաւոր տարածութեամբ քրիստոնեայ քաղաքաց երևոյթ կ'ընծայէ, որոյ հաւաստիք են վեց եկեղեցեաց կաթողիկէք և զանգակատունք: Բուսականութեան մասին շատ աղքատ է քաղաքս, որոյ վրայ այժմ նոր կը սկսին խնամք տալ ծելու: Քաղաքիս ներքին և կամ բարոյական կառավարութիւնքն յուսալիբ ապագայ կը խոստանայ հայ սերունդոց, դպրոցաց յաճախութիւնն, որոյ վրայ մեծամեծ գումարներ կը ծախեն, պիտի հաւաստեն օր մի գրաս. այժմ ևս մօտ հազարի երկսեռ ուսանողք դպրոցաց, ինչպէս քաղաքին նոյն և եկեղեցեաց կենդանի զարգարանք են: Իրենց միաձև զգեստներով:

Այլ ես դեռ փոքրիկ կառքով առաջ կ'երթայի, դէպ իմ ասպնջական մեծարդոյ Եպիփան Պապայեանի տունը, որ արդէն 'ի վաղուց ինձ ծանօթ էր և բարեկամ: Պ. Պոյպոյեանցի առնը Ալուսաւորիչ փողոցին վրայ, գեղեցկաչէն տանց մին է. առաջ դնալու միջոցիս աստի և անտի շատ հայերէն բացատրութիւնք յակնալու կը հասնէին, որք թէպէտ ինձ համար նոր չէին, վասն զի մեծաւ մասամբ նոյն է Նախիջևանու հայ բարբառը Ղրեմեցայն հետ, սակայն և այնպէս այդ հետաւոր աշխարհին մէջ, և այն 'ի փողոցի, Հայոց լեզուն լսելը ինձ շատ ախորժելի կու դար. ու չադրութեամբ մտիկ կ'անէի՝ որ բառ

1 Այժմ Կամենիցի վաճառականութիւնը Հըբէից ձեւքն է՝ միջոցեա երբեքն Հայոց ձեւքն

էր ինչպէս քաղաքին, նոյն և աշխարհին վաճառականութիւնն:

մի ուշադրութեանէ չվրիպի. մին բարձրաձայն կ'ատէր ընկերին. « Հաժէ ինա բանը գիտիսու, սախըն չմտանաս » . ընկերը կը պատասխանէր. « Ատ ինչ կարածի է, հիշ կը մոռնամ եզիլ է, ատ շատ ինթեռէսնի բան է ու » . երրորդ մի « Ասիրկուն սատ ( զբօսարան ) կու գան » . չորրորդը կը պատասխանէ « Օխթնի-ու թմնի արայլը խայրէթ կ'անիմ գալու, առաջ չիմ կարնալ » . տանք և այլ տանոց նման ալայ - մալայ , ա. փալ - քալփալ , ձորով - մորով բացատրութիւնք , որոց քէն կարելի է մնացեալն գուշակել : Այս ևս հարկաւոր է աւելցնել, որ Նախիջևանցիք իրենց համար առանձին գտտ քաղաք և բնակութիւն ունենալով, յօտարաց ամենեւին ակնածութիւն չունին, և տան և փողոցի մէջ ամենին արբերութիւն չեն դնել . շատ անգամ տան մէջ և այն ցած ձայնով լինելու բացատրութիւնք կամ խօսք, հրապարակներու վրայ բարձրաձայն կը հնչեն : Այլ ինձ, այս պարագայիս մէջ, ամենայն բառ, ամէն հայկական խօսք կամ զրոյցք քաղցր կը հնչէր . այդպէս սիրելի է սովորութեան օրէնքն, և ակործելի հայրենեաց յիշատակն :

Հասայ շուտով մեծարգոյ բարեկամիս տունը, որոյ սիրալիր հիւրընկալութիւնն առաջին վայրկեանէ մինչև մեկնելու օրս, մեծապէս զիս պարտաւորած է : Նախիջևանու արժանի յիշատակի շինութեանց վրայ խօսելէն առաջ քանի խօսք զրուցեմ դոյս աշխարհաբար լեզուին վրայ, որոյ ազաւազմունքն արդէն քանի մի բառով քիչ մ'առաջ յիշեցինք : Այդ բարբառոյն վրայ յիրաւի երկարօրէն խորհրդածել կարեւոր է . զի այդ այն սրբազան աւանդն է՝ զոր յընթացս 600 տարիներու պահած է իրեն սեփական յատկանիշ Անեցի ուտանիկ ժողովուրդն, որով կը զանազանի յօտարաց, որով կը տածէ ոգի ազգի և սէր հայրենեաց : Թէպէտ ռամկին բերանը աղաւաղ ևս երևնայ, բազմութեամբ թաթար և ռուս բառերու . այլ հիմը և արմատը գեղեցիկ է և վա-

յիւուչ և քաղցրահնչիւն քան զամենայն դաւառական բարբառ հայկական լեզուիս : Եթէ հայագէտ մի ուշադրութեամբ միտ դնէ, կրթեալ և հայրենագէտ Նախիջևանցոց երիտասարդաց և օրիորդաց, որք հայկական տառերն նազանօք և փափուկ հնչելով կը խօսին իրենց անեցի լեզուն, թօթափելով և կամուտ խորթ ածայն օտարոտի բառերը, կրնայ ստուգել զրուցածիս ճշմարտութիւնը :

Ոմանքնոր հայագէտք, իրենց նորահնար լեզուով պանծացեալ համարձակ կը գրեն պախարակելով քանի մի օտարամուտ բառք Նախիջևանցոց բարբառոյն՝ ի բերան սերտած . այլ լեզուաց կանոնը և կազմը քննողին յայտնի է գեղեցիկութիւնը Անեցոց բարբառոյն : Բացատրութեան անկարօտ ճշմարտութիւն մի է, որ որչափ ազգ մի կրթուի և յղկուի՝ նոյնչափ այն ազգին լեզուն մատենագրութեամբ կը կրկուի : Նախիջևանցիք և Ղրիմեցիք գերահռչակն Անուց Բագրատունի ոստանիկ ժողովրդեան մասն են . ինչպէս քաղաքն Անի անմահն է գեղեցիկութեամբ, այլոց քաղաքաց աշխարհիս միոյ, նոյնպէս կը վայլէր որ լինի նորա ժողովրդոց բարբառը : Թաթարաց լուծը և այլ օտար ազգաց ազդեցութիւնը եթէ տակաւ Նախիջևանու բարբառէն վերցուի մուրտի, անշուշտ այդ բարբառը ամենայն աշխարհիկ բարբառէ աւելի քաղցր հընչիւն և ճկուն պիտի հանդիսանայ : Նախիջևանցիք այդ բանին դրսէն վարժապետաց կամ հեղինակութեանց կարօտութիւն չունին . շատ գեղեցիկ, միանգամայն ախորժալուր հնչմամբ կը խօսին քաղաքին կրթեալ մասն . այդ գործոյն համար մեծ դիտութիւն և մեծ խեղճ ևս հարկաւոր չէ . ամենայն հայկական ականջ կը զանազանէ որ աւելի ընարելի է խորդածայն թաթար բառերուն տեղ՝ կոկ հայրերէնը գործածել, ինչպէս՝ շառլիսի տեղ՝ հիմայ, ալայ մալայի տեղ՝ բոլորովին, ափայ քալփալի տեղ՝ աճապարելով, ձեղպէքի տեղ՝ հարկալ : Նոյնպէս վերջին ժամա-

նակի ուս եկամուտ տեղ բաւերուն նորա հայկականը դրած էլ. դրադէտ նախիջկանցին չի գրուցել սիրալուռու բիւն, այլ թաղութիւն խննաւութիւն, չի գրուցել ուլիցա, այլ փողոց. ոչ փուշուշաւ, այլ հրապարակ. ոչ քուշուշ, այլ կառավար: Ըստ իմ կարծեաց նախիջկանու հին և ընտիր աշխարհաբառին խննդարման մեծապէս պատճառ կըրնան լինել, զեղբու ոմանց մէջ գրուած կովկասցի ուսուցիչք. նախ սորա տղայոց զարգացումը հարկաւ քանի մի տարի ետե կը ձգեն, զի ոչ տղայք վարժապետին զրուցածը կը հասկընան, և ոչ վարժապետը տղայոց լեզուն. երկրորդ՝ հաւանական է որ շատ անգամ տղայոց գեղեցիկ աննյի բացատրութիւնք՝ անխմանալի լինելով վարժապետաց համար, ծաղրածութեան նիւթ կը լինին<sup>1</sup>: Ուրչափ Կովիկ բան կը լինէր, եթէ նախիջկանցիք չուտով իրենց դպրապետու և այլ վարժարանաց մէջ գեղերու և քաղաքին ուսումնարանաց համար վարժապետ պատրաստէին. որով միծապէս՝ փոքր տղայոց իրենց մայրենի գեղեցիկ աշխարհաբար լեզուաւ զարգանալուն պատճառ կը լինէին:

Թ

ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ  
ՆԱԽԻՋԵԿԱՆՈՒ

Նախիջկան շէն և պայծառ վեց եկեղեցի ունի քաղաքին մէջ. Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցին իւր ընդարձակութեամբ և ճախութեամբ կը գերազանցէ վրայս. ՚ի միջավայր քաղաքին շինուած է՝ մեծազորմ և հոյակապ, չորս կողմը ծառատան, զոր կը շրջապատեն զրաէն երկաթեայ ճաղք, լայնանիստ է կաթողիկէն, արասքայ և ՚ի ներքոյ նկարեալ. բարձրաբերձ է զանգակատունն՝ որ մտից դաւթին վրայ կ'ամրառնայ: Եկեղեցեաց ճարտարապետութիւնն առ հասարակ

տեղական կամ ուսական է. աւելի պիտայից և յարմարութեան ուշ զարձուած է քան թէ գեղեցիկ և վայելչութեան. այս դատողութիւնս բոլորովն սխալ կը լինի գերեզմանոցի Ս. Կարապետ նորա շէն եկեղեցւոյ մասին, որոյ վրայ տաանձին խօսիլ հարկ է: Քաղաքիս եկեղեցիք ամէնք ալ ունին մտից առաջ մեծամեծ գաւթիժներ, որոց վրայ կը բարձրանան զանգակատունքն. յաջմէ պահարան, յորում կը պահուին ընդ այլ եկեղեցական սպասուց բազմութիւ գրչագիրք. ՚ի ձախմէ ժամակոյի կամ պահապանի համար սենեակ մի: Եկեղեցեաց ներսի կողմէն, մտից դրանց վրայ կան վերնատուններ. ընդարձակ է եկեղեցեաց մէջն և առհասարակ մտքուր կը պահուին. դասը զատուած է ե, եկեցիէն, խորանները միշտ բարձրաբերձ խաչակներով զարդարուած են, ուր բաց ՚ի խորանին պատկէէն, այլ շատ պտակերներ կան, յորոց ոմանք արծաթի հանդերձիք պաճուճեալ են. խորանաց ետի կողմը, ՚ի միջավայրին մի մեծ խաչ, վրան փրկչական արձանով, և ընդ աջմէ ընծայարան, խաչկալին ետի կողմը: Սեղանից վրայ բաց ՚ի արծաթապատ խաչէ և աւետարանէ՝ կայ ըստ Ռուսաց եկեղեցեաց՝ եօթնաթաղեան աշտանակ մի:

Նախիջկան համեմուտ երկրորդ օրը՝ արգոյ բարեկամիս հետ՝ առաջին այցելութիւն Ս. Լուսաւորչիս տաճարին տըւիւք, ուր արդէն պատարազն առաջ գնացեր էր, այլ ՚ի միջավայր դասուն կանգնած ալախօսիկ դպիրն՝ իմ ուշադրութիւնս զբաւեց, իւր ախորժապետ երգեսցողութեամբ: Այնմիջապէս ժամէն վերջը ծանօթանալով եկեղեցւոյն առագերէց Տէր Խաչատուր Զարիֆեանի հետ, մտանք պահարանը, ձեռագիրքը աչքէն անցընելու համար: Լուսաւորչի պահարանը անհամեմատ կերպով հարուստ է գրչագրք, քան այլոց եկեղեցեացը, ուր կան երկու հարիւրէն աւելի գրչագիրք, ըստ մեծի մասին հոգեւոր գրեանք: Մե-

<sup>1</sup> « Մանի մանի մի՛ ասէ », կովկասցւոյն անի. մանալի է. « խեղճ ման կու գայ », նոյնպէս անտօլոյ կովկասցւոյ. « Ջրազը անցուր. » և՛

էի տեղ. « ապուլ տուեց լեռնէն վար », Թա. զուց, և այլն:

ճայտորդ են երեք մագաղաթեայ աւե-  
տարանք՝ կլիկիկեան յիշատակարանօր-  
կան և ՚ի կաֆա գրուած պատկերազարդ  
աւետարանք, որոց նկարք ներկայացը-  
նեն փրկչական առաւինները. այս պատ-  
կերք նկարչութեան արուեստի մասին՝  
գերազանց երեցան ինձ՝ քան մինչ ցայ-  
սօր տեսածներս հայկական ձեռագրաց  
մէջ, որ թերևս արգիւնք լինի մերայնոց  
ընդ Գեորգեացոց ունեցած յարաբերու-  
թեանց. բայց յայտցանէ Լուսաւորչի պա-  
հարանին մէջ կը գտնուին ընտիր ճա-  
շոցք, Յայսմաւուրք, Ճառքնտիրք, երկու  
օրինակ Սարգիս Ենորհալի, Գանձա-  
րանք, Շարականք, Պատարագ մատոյցք,  
ընդհանրապէս մաքուր գրուած, որոց  
երեք չորրորդ մասը ՚ի իւրապաւոր մաշ-  
րաքաղաքն կաֆա և ՚ի իւրապաւր  
Սուրիաք գրեալք, ընդ հովանեաւ գա-  
նազան եկեղեցեաց, ՚ի ձեռն փցուի և  
մեղրամեղ երիցանց և արեղայից. Չե-  
ռագիրքս թղթատած միջոցիս, որոց  
կոկիկ և վայելչաձև գրչութեանց վրայ  
ոչ սակաւ տխորժանք կը զմայլէի, մտք  
լատին բառերն կ'օրոճայի Sic transit  
gloria mundi. Երբեմն բազմաթիւ հայ  
գաղթականք, շէն հայ եկեղեցեօք և  
բազմագոյն ևս հայազէտ հոգեւորակա-  
նք պայծառացեալն կաֆա, այժմ նը-  
կուն և անփառունակ. շտաք յեկեղե-  
ցեաց հիմնայտտակ, մնացեալ գտաարկ,  
և նոցա ծուխն և ժողովուրդ՝ աստ՝  
Դօնեան աշխարհքը շէնցընելու քըւած:

Եթէ այդ ձեռագիրք, նոյնպէս և այլ  
եկեղեցեաց մէջ գտնուածք, նոյն և որք  
առանձնականաց մօտ կը գտնուին, մա-  
նրը քննուին, ոչ սակաւ տեղեկութիւն  
կարելի է հաւաքել, ինչպէս ազգիս ընդ-  
հանուր պատմութեան, նոյնպէս և աւե-  
լի ևս Ղրիմեցի գաղթականաց մասին:  
Մեծապատիւ Դրիգօր աղա Սալթի-  
քեան, որ այժմ արժանաւոր քաղա-  
քադըւլուսն է Նախիջևանու, խոստացաւ.

Ս. Լուսաւորչի մօտ շինել տալ առանձին  
գրատուն գրչադրաց համար, և հոն ժո-  
ղովել այդ թանկագին յիշատակարան  
նեղը:

Երկու մեծ ծառայութիւն պիտի մա-  
տուցանէ ազգիս Գրիգոր աղա այդ գը-  
րատան շինութեամբ, մին հաւաքելով  
ի մի տեղ ձեռագիրները, կորսուելու և  
աստ և անդ ցիրուցան լինելու վտանգը  
կը վերանայ. և երկրորդ ազգիս գալու-  
թեան համար փաստակող անձին մեծ  
գիւրութիւն կը լինի, ամփոփ գանելով  
այդ կարևոր գործիքը. կը փափագիմք  
որ օր մի առաջ իրագործէ Գրիգոր աղա  
իւր խոսամունքը<sup>1</sup>:

Միւս եկեղեցիք որ Նախիջևանու այլ  
և այլ թաղերուն մէջ շինուած են, ինչ  
պէս Ս. Համբարձման, Աստուածամօր,  
Ս. Նիկիտայոսի, Ս. Գէորգայ, Ս. Յորտի,  
մասնաւոր յիշատակութեան արժանա-  
ւոր բան չունին: Ի յիշատակ համանուն  
կաֆայեցի եկեղեցեաց, անչուշտ շինած  
են Նախիջևանցիք, քաղաքին հիմն օր-  
հնուելուն պէս՝ փայտաշէն եկեղեցիք,  
որ և զետեղուած են Ղրիմէ բերած  
սրբազան համանուն եկեղեցեաց սպաս-  
քը և սրբազան անօթները, և ապա ժո-  
մանակ անցնելէն վերջ՝ փայտաշէնք ՚ի  
քարաշէն փոխուած են: Ս. Լուսաւորչի  
ընդարձակ բակին մէջ տեսնելով քառա-  
կուսի մատրանած և փոքրիկ անդուռն և  
անպատուհան շէնք մի, որ սրբոյն պատ-  
կերը կը կրէր վրան, հարցուցի թէ ինչ  
փախճանի համար է. ինձ պատասխանե-  
ցին թէ հին եկեղեցեայն խորանին տեղն  
է, որ քունակիս չլինելու համար պա-  
տուպարել է Յովհաննէս աղա փոփո-  
վեան<sup>2</sup>:

Խորհուրդ կու տամ ես ամէն հայ ճա-  
նապարհորդի, նախ հեռուէն և ապա  
ի մօտոյ լաւ մի վնենլ Գերեզմանցի  
Ս. Կարապետ նորաշէն եկեղեցին. որ  
իւր ճարտարապետութեամբ և վայել-

1 Պ. Կարապետ Եղեան արգէն 10-15 տարի  
նէրէ ՚ի վեր գրած է Ս. Պետրոսբուրգէն առական  
նաւոր Նախիջևանցիս, որ սոցա թանկարան  
մի լինեն. քաղաքին մէջ՝ ամէն աւտակ հնութիւն-  
ներ պահպանելու համար. սակայն ցայսօր ժա-

մանակի այս կարևոր բանին հօգ տանող չէ եղած:  
2 Յովհաննէս աղա Փոփոլեան այժմ հան-  
գուցեալ է Թոզլը 100000 ռուբլեոց գումար  
յօրտաւ ազգային բարեգործական հաստատու-  
թեանց, բայց յողջութեան միջոց տուածներէն:

լուչ կոնաձև կաթնօղիկէլու . երկնաչու կամարօք, բարձր սիւներով և քանդակագործ խորիխներով և խոյտկներով կը յիշեցնէ կամ լաւ ևս կը պատկերացընէ աչաց զիժաց՝ տարաբաղճ Անւոյ գեղեցկագոյն եկեղեցեաց մին : Եկեղեցւոյն մէջ ամենայն ինչ ազգային ճաշակով յարգարուած է, և հայու թիւն կը շնչէ . ազգային սրբոց կենդանադիրք կը վարդարեն պատերը, թագապակ հայրապետք ազգային տարազով, սրբակրօն վարդապետք վիզարիւ պրօղիտր : Աւագ խորանին պատկերը նմանութիւն է Մուրիլլոյ սպանիացի նկարչին՝ Աստուածամօր անարատ յղութեան պատկերին . վերի կողմը նկարուած է ամենասուրբ Երրորդութիւն, որ զհրաշագեղ կոյսը կը պսակէ երկնային պսակաւ թագուհի երկիւի և երկրի : Քրիստոնէական սուրբ հաւատոյս մերոյ էական մտտունք հանդերձ պատմութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ, յանդիման կ'երևնայ փոքր եկեղեցւոյս մէջ, որ կը կրէ զանուն Ս . Կարապետի՝ պաշտպանի ազգիս Հայոց : Եկեղեցւոյս ճարտարագիտոն եղած է Պ . Բաղդասար Հազր-Բէգեան՝ հայ երիտասարդն, որ ճարտար յատակադմին համարստացել է վարձարժի միտալ Ս . Պետրբուրգի ակադեմիայէն . վերու կացու գործոյն եղած է Յովհաննէս ալա խաթրանեան . բովանդակ եկեղեցին շինուած է արովք բարեպաշտ տիկնոջ Ակուլինէ Աղաճանեան . 1882ին Մակար . սրբազան, որ այժմ կաթնօղիկս ամենայն Հայոց, հանդիտապէս օժտած է : Ինքին Յովհաննէս աղա, ոգևորեալ կերպով խօսելով քննողիս հետ՝ եկեղեցւոյ մասին, կը հարցընէր թէ « Օտարոտի իմն կամ ոչ ազգային՝ արդեօք սպրդած է շէնքին » . վասն զի նա բանեցուցել է ամենայն ջանք՝ որ ամենայն ինչ հայկական լինի . ևս ազգեցի՝ որ « Բաց ՚ի Եօթնաշահեան աշտանակէն որ աւագ խորանին վրայ է, օտար

բան չտեսայ . զի իմ տեսած տաւրիացի հայկական եկեղեցիք խորանին միջաւայրը ունին մի խաչ, և երկուստեք երեք կարգ փոքր աստիճանաց վրայ՝ մի մի աշտանակ, ընդ ամէնէն վեց աշտանակ » : Յովհաննէս աղա աւելցուց . « Եօթնաշահեան ոսկեգօծ աշտանակը 700 բուրլիով դնուած է, սակայն և այնպէս որովհետեւ չէ ազգային, փոխելը հարկ է » : Եթէ Յովհաննէս աղայի որևով լինէին միւս այլ գործող անձինք՝ Նախիջևանու, աւելի պայծառ պիտի փայլէր ազգութիւն ՚ի Նախիջևան : Սակայն և այնպէս շէն է ազգութեամբ Նախիջևան և կենդանի լեզուն ազգիս ամէն տեղ : — Այսպիսի եկեղեցեաց մասին :

Գաբրիւայց մէջ անշուշտ առաջին տեղին պէտք է գրուէր զպարավանքն կամ թեմական գաբրանոց վիճակին (Սեմինարիում), յոր դասական վարժութիւն կը ստանան ուսանողք, հմտութեամբ հին յոյն և լատին լեզուաց, որոց աւանդօղին և միանգամայն պաշտօնավար — տեսչի վարժարանին է Պ . Գալուստ Զարրլսեանց՝ աստուերկու ազգային վարժապետք :

Ապա սրբաւարակուն վարժոցը ընդ խնամով Պ . Բափայէլ Պատկանեանցի, ազգային պուետի և հեղինակին Գալուստ — Բաթիկայոյի :

Կոկայեան գիշերօթիկ օրիորդաց ուսումնարան, յորում են 60 օրիորդք : Հռիփսիմեանց կոչուած օրիորդաց վարժարանը, յորում 123 են ուսանող օրիորդք :

Երիտակուն դպրոցք Ս . Համբարձում և Ս . Թորոս եկեղեցեաց մեծ՝ մանչերու համոց :

Բաց յայոցանէ կան և ռուս վարժարանք և մարդոցք, որոց մին թէպէտ և նրէ ազգիս երանելի Թարգմանչաց ալուանքը ՚ի ճակատու, այլ եթէ երանելեաց ոգին հոն չի տիրել, միայն պիտակ անուանքն՝ չեմ կարծել որ մեծ օգուտ բերեն Նախիջևանցոց :